

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հաշվի առնելով, որ Միսիանի համայնքի սեփականություն հանդիսացող Միսական 41 հասցեի վարչական շենքի 1-ին հարկից 19.7 քմ մակերեսով տարածքը չի օգտագործվում և նկատի ունենալով «ԷՅԷՄԷՆ» ՍՊԸ տնօրեն՝ Արևհատ Սահակյանի 2019 թվականի հունվարի 14-ի գրությունը, նպատակահարմար է տարածքը վարձակալական հիմունքներով տրամադրել «ԷՅԷՄԷՆ» ՍՊԸ-ին հաշվապահական ծառայություններ մատուցման նպատակով:

Նշված գործառույթը համայնքապետարանին կբերի ֆինանսական եկամուտ, որը կնպատակաուղղվի համայնքի հետագա ծրագրերի իրականացմանը:

Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության
և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝



Ս.Հովհաննիսյան

ՏԵՂԵԿԱՆՔ

Միսիանի համայնքի ավագանու որոշման նախագծի հաստատումից հետո, համայնքային բյուջեի ծախսային մասում փոփոխություն չի կատարվի:

Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության
և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝



Ս.Հովհաննիսյան